

«65 խնդիր նվիրված 65 ամյակին »

Ներածություն:

Առաջադրանքների փաթեթը կազմված է 65 խնդրից, որոնք առաջարկել են ինչպես կրթահամալիրի, այնպես էլ այլ դպրոցի տարատարիք սովորողներ մաթեմատիկական ֆլեշմոբի համար: Խնդիրները վերցված են 2020թ.-ի հունվարից հունիս ժամանակահատվածի յուրաքանչյուր ամսվա մաթեմատիկական ֆլեշմոբի «Սովորողներն են առաջարկում» մակարդակի խնդիրներից: Խնդիրները տարբեր բարդության են, նախատեսված են 4-12-րդ դասարանի սովորողների համար: Փաթեթը հարմար է ուսումնասիրել մաթեմատիկայի դասերին, ընտրությամբ գործունեության դասերին, կամ դասերից դուրս մաթեմատիկական խմբակներում՝ որպես լրացուցիչ աշխատանք: Ամառային արձակուրդի ամիսները ամենահարմար ժամանակահատվածն է լուծել փաթեթի առաջադրանքները: Խնդիրների աղբյուրը տես [հղումով](#): Խնդիրների լուծումները կարելի է տեսնել սովորողների բլոգներում և «Մաթեմատիկայի, ծրագրավորման, սեղանի և համակարգչային խաղերի» դասավանդողների մասնագիտական խմբի [կայքէջում](#): Փաթեթը նվիրվում «Միխիթար Մեբաստացի» կրթահամալիրի մանկավարժության լաբորատորիայի ղեկավար, փոխտնօրեն **Գևորգ Հակոբյանին**, նրա *65-ամյակին*:

Մեծագույն սիրով, խորին հարգանքով և երախտագիտությամբ շնորհավորում ենք Ձեզ, մեր սիրելի ուսուցիչ՝

1. Մարզական ստուգատեսի ժամանակ տղան հայրիկի հետ գնաց հրաձգարան: Հայրը գնեց 10 փամփուշտ: Ամեն անգամ, երբ տղան խփում էր նշանակետին, հայրը տալիս էր ևս մեկ փամփուշտ, իսկ ամեն վրիպումի դեպքում՝ վերցնում էր մեկ փամփուշտ: Տղան կրակեց 55 անգամ, որից հետո նրա փամփուշտները վերջացան: Քանի՞ անգամ տղան դիպավ նշանակետին:

Գրիգորյան Տիգրան, 7-րդ դասարան

2. Գտեք օրինաչափությունը և վերականգնեք չորրորդ սյան թվերը:


35	42	49	?
40	48	56	?
45	54	63	?

Աթոյան Անի, 7-րդ դասարան

3. Արատեսյան դաշտում աճում են ծաղիկներ: Ամեն օր ծաղիկների քանակը մեծանում էր ուղիղ երկու անգամ: Ամբողջ դաշտը ծածկելու համար անհրաժեշտ է 48 օր: Քանի՞ օր է անհրաժեշտ դաշտի կեսը ծածկելու համար:

Գոմցյան Արսեն, 7-րդ դասարան

4. Թղթի երեք շերտիկներ վրա գրել են մեկական քառանիշ թիվ, որոնց գումարը 10126 է: Թղթերը դասավորել են այնպես, որ երեք թվանշան չի երևում: Գտիր չերևացող թվանշանները:



Մկրտչյան Մանե, 7-րդ դասարան

5. Մեծ քառակուսին բաժանված է փոքր քառակուսիների: Պատկերի մակերեսի n° բ մասն է ներկված:



Մկրտչյան Մանե, 7-րդ դասարան


6. Գնացքն ունի 12 վագոն: Յուրաքանչյուր վագոն ունի խցիկների միևնույն քանակը: Տիգրանը ճանապարհորդում է գնացքի սկզբից հաշված 18-րդ խցիկում, որը 3-րդ վագոնում է: Լիլիթը նստել է գնացքի սկզբից հաշված 50-րդ խցիկում, որը 7-րդ վագոնում է: Քանի խցիկ ունեն գնացքը:

Հակոբյան Արեգ, 7-րդ դասարան

7. Գտեք 1234567891011121314151617181920212223... հաջորդականության մեջ 88-րդ դիրքում գրված թվանշանը:


Նահապետյան Նատալի, 7-րդ դասարան

8. Նկարին նայելով գտիր գումարը



Էրիկ Գյազունց, 7-րդ դասարան

9. Մեծ շրջանագծի շառավիղը երկու անգամ մեծ է փոքր շրջանագծերի շառավիղներից: Հեմեմատեք կանաչ ծածկույթի և կապույտ ծածկույթի մակերեսները:



Ենգիբարյան Լևոն, 7-րդ դասարան

10. Մրցմանը մասնակցում էր 5 սովորող: Ամեն հարցին նրանցից մեկը պատասխանում էր սխալ, իսկ մյուսները՝ ճիշտ: Արամի ճիշտ պատասխանների քանակը 10 էր, որն ավելի քիչ էր, քան մյուսներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանների քանակը: Դավիթի ճիշտ պատասխանների քանակը 13 էր՝ ավելի շատ, քան ցանկացած ուրիշի ճիշտ պատասխանների թիվը: Ընդամենը քանի՞ հարց կար մրցույթում:

Գրիգորյան Տիգրան, 7-րդ դասարան

11. Նայելով նկարին, գտեք, թե ի՞նչ թիվ պետք է լինի ? նշանի փոխարեն:

$$\begin{aligned}
 & (\text{car} + \text{car}) \times \text{car} = 200 \\
 & \text{circle} + \text{circle} + \text{circle} = 60 \\
 & \text{star} : \text{star} + \text{star} = 49 \\
 & \text{star} + \text{car} - \text{circle} = ?
 \end{aligned}$$

Մարտին Բարսեղյան, 7-րդ դասարան:

12. Ի՞նչ թվանշաններ պետք է դնել A-ի և B-ի փոխարեն, որ ստացվի ճիշտ հավասարություն՝ $AB \cdot A \cdot B = BBB$:

Սաթենիկ Մանուկյան, 7-րդ դասարան

13. Հետևյալ վեց թվերից՝ 23, 53, 33, 13, 43, 73 հինգն ունեն միևնույն հատկանիշը, որը չունի վեցերորդ թիվը: Ո՞րն է այդ թիվը:

Լիա Հարությունյան, 7-րդ դասարան

14. 45 ճագարը 9 վանդակներում ինչպե՞ս տեղավորենք, որ բոլոր վանդակներում լինեն տարբեր քանակությամբ ճագարներ:

Մեղա Ենգիբարյան, 7-րդ դասարան

15. Լիլիթն ուզում է 5 ուտեստ պատրաստել գազօջախի վրա, որն ունի միայն 2 այրիչ: 5 ուտեստները պատրաստելու համար անհրաժեշտ է համապատասխանաբար 40, 15, 35, 10 և 45 րոպե ժամանակ: Ամենաքիչը որքա՞ն ժամանակում Լիլիթը կարող է պատրաստել բոլոր 5 ուտեստները, եթե նա միայն այն ժամանակ կարող է վերցնել ուտեստը այրիչի վրայից, երբ այն արդեն պատրաստ է:

Տարոն Անտոնյան, 7-րդ դասարան

16. Ջնջիր այս թվից 40612027001 հինգ թվանշան այնպես, որ մնացած 6 թվանշաններով (առանց տեղափոխություն անելու) կազմված թիվը լինի փոքրագույնը: Ջնջելուց հետո, ի՞նչ թիվ ստացար:

Մեղա Մարգարյան, 7-րդ դասարան

17. Եթե Օֆելիան գնի 4 գրիչ, ապա նրա մոտ կմնա 100 դրամ, իսկ 7 գրիչ գնելու համար նրան չի բավարարում 80 դրամ: Ինչքա՞ն գումար կար Օֆելիայի մոտ:

Օֆելիա Անդրեասյան, 7-րդ դասարան


18. Բոլոր եռանիշ թվերից, որոնց թվանշանների գումարը ութ է, ընտրված են ամենամեծ և ամենափոքր թվերը: Որքա՞ն է դրանց գումարը:

Խաչատրյան Արփիինե, 7-րդ դասարան

19. Մեղան և Նանեն կտրեցին երկու հավասար ուղղանկյուններ: Մեղան ստացավ երկու ուղղանկյուն, որոնցից յուրաքանչյուրի պարագիծը 40 սմ է, իսկ Նանեն ստացավ երկու ուղղանկյուն՝ յուրաքանչյուրը 50 սմ պարագծով: Որքա՞ն էր սկզբնական ուղղանկյունների պարագծերը


Մեղա Մարգարյան, 7-րդ դասարան

20. Քանի՞ քատակուսի կա նկարում:



Լիա Հարությունյան, 7-րդ դասարան

21. Ունենք չորս տարբեր գույնի տուփեր: Նայելով նկարին՝ որոշեք ամենաճանր տուփի գույնը:




Եվա Խաչատրյան, Արևելյան դպրոց պարտեզ 4-րդ դասարան

22. Նարեկը գումարեց յոթ թիվ և ստացավ 2020: Այդ թվերից մեկը 201-ն է: Նա 201-ը փոխարինեց 102-ով և նորից գումարեց բոլոր թվերը: Ի՞նչ ստացավ Նարեկը արդյունքում:

Գոռ Մնացականյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան

23. 3 սմ կողմերով եռանկյունը բաժանված է 1 սմ կողմերով 9 փոքր եռանկյունների: 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 թվերը տեղադրեք այդ եռանկյուններում այնպես, որ 2 սմ կողմերով յուրաքանչյուր եռանկյան ներսում գրված 4 թվերի գումարը լինի նույն թիվը: Գտիր այդ թիվը:



Գոհար Կարազյան, Կանադա, 7-րդ դասարան (հեռավար ուսուցում)

24. Տուփում կա 23 գնդիկ, որից 15 –ը կարմիր է, 5-ը՝ դեղին և 3-ը՝ կանաչ: Ամենաքիչը քանի՞ գնդիկ պետք է հանել առանց նայելու, որպեսզի բոլոր գույները դուրս գան:

Տիգրան Մարջանյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան:

25. Գտնեք 5, 6, 4, 7, 3, _, _ հաջորդականության օրինաչափությունը և շարունակեք գրել ևս երկու թիվ՝

Օֆելյա Անդրեասյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան

26. Եթե 4-հոգիանոց ընտանիքի անդամների տարիքները գումարենք՝ կստացվի 68: 4 տարի առաջ այդ թիվը հավասար էր 53-ի: Քանի՞ տարեկան է ընտանիքի ամենափոքր անդամը:

Նարե Ղազարյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան

27. Հաշվեք $201220122012 \cdot 2013 - 201320132013 \cdot 2012$ արտահայտության արժեքը:

Տիգրան Գևորգյան, 181 դպրոց, 7-րդ դասարան


28. Իրար հետևից գրված են յոթ թվեր այնպես, որ յուրաքանչյուր երեք հարևան թվերի արտադրյալը հավասար է 48: Առաջին թիվը չորս է: Ի՞նչ թիվ է գրված յոթերորդ տեղում:

Արիստակեսյան Մերի, Հայ կրթություն, կրթական հիմնադրամ, 5-րդ դասարան

29. Մարինեն պետք է ինչ-որ թվի գումարեր 26 թիվը: Փոխարենը նա այդ թվից հանեց 26 և ստացավ -14: Ի՞նչ թիվ նա կստանար 26-ը գումարելիս:

Գոհարինե Ազնաուրյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան

30. Նկարում պատկերված է հնգանկյուն աստղ: Գտեք A անկյան մեծությունը:



Հարությունյան Աննա, Միջին դպրոց, 8-րդ դասարան

31. Այգում կա 7 փեթակ, յուրաքանչյուրում՝ 7000 մեղու: Յուրաքանչյուր 1000 մեղուն մեկ ամսվա ընթացքում ստեղծում է 700գ մեղր: Մեկ ամսում փեթակներից ինչքա՞ն մեղր կստանանք:

Դավիթ Հայրապետյան, 4-րդ դասարան, Հարավային դպրոց

32. Այն հարցին, թե քանի աշակերտ ունի ինքը, Պյութագորասը պատասխանեց. -Իմ աշակերտների կեսը ուսումնասիրում է մաթեմատիկա, քառորդ մասը՝ բնություն,

ութերորդ մասը լուռ մտածում է, մնացած երեքը անբաններ են: Քանի՞ աշակերտ ունի Պյութագորասը:

Դավիթ Ղարիբյան, 5-րդ դասարան, Հայ կրթության կրթական հիմնադրամ

33. Լիլիթը յուրաքանչյուր տասը բույսեր մեկ մի մոմ է վառում: Մոմերից յուրաքանչյուրը վառվում է 40 բույսեր ու վերջանում է: Քանի՞ մոմ է վառվում այն պահից 55 բույսեր հետո, երբ Լիլիթը վառեց առաջին մոմը:

Լալա Հովհաննիսյան, 7-րդ դասարան, Միջին դպրոց

34. Գտիր 100-ից փոքր այն թվերի քանակը, որոնք ունեն ճիշտ երեք հաս բաժանարար:

Նանե Ժամհարյան, 7-րդ դասարան, Միջին դպրոց

35. 300գ զանգվածով առաջին համաձուլվածքը պարունակում է 40% անագ, իսկ 200գ զանգվածով երկրորդ համաձուլվածքը՝ 30% անագ: Որոշել այդ համաձուլվածքները իրար հետ ձուլելուց ստացված անագի պարունակության տոկոսը:

Մանե Հովհաննիսյան, 7-րդ դասարան, Միջին դպրոց (հեռավար ուսուցում)

36. Գտնելով օրինաչափությունը՝ շարունակիր գրել ևս երկու թիվ՝

11, 8, 13, 16, 15, 24,,

Համիկ Դարբինյան, 5-րդ դասարան, Արևելյան դպրոց (հեռավար ուսուցում)

37. Ծաղրածուներ Բամբ, Բիմբ և Բոմբ ելույթ ունեցան կրկեսում կարմիր, կապույտ և կանաչ վերնաշապիկով ու կոշիկով: Բիմի կոշիկները և վերնաշապիկը մի գույնի են: Բոմբ ոչ մի կարմիր բան չէր հագել. Բամի կոշիկները կանաչ էին, իսկ վերնաշապիկը՝ ոչ: Ի՞նչ գույնի էին Բոմի և Բիմի կոշիկները և վերնաշապիկները:

Սեդա Մարգարյան, 7-րդ դասարան, Միջին դպրոց


38. Ընտրել են հինգ թիվ այնպես, որ ցանկացած երեք թվերի գումարը գույգ է եղել: Ինչպիսի՞ թիվ է յուրաքանչյուրը՝ զո՞ւյգ, թե՞ կենտ:

Դավիթ Սողոմոնյան, 7-րդ դասարան, Միջին դպրոց

39. Տրված են հետևյալ թվանշանները՝ 0, 2, 4, 5, 7, 9: Գտիր այն բոլոր եռանիշ թվերի քանակը, որոնց առաջին և վերջին թվանշանները նշված թվերն են:


Մինդելի Դիանա, Ավագ դպրոց, 11-րդ դասարան

40. Տրված ABCD շեղանկյան մեջ BC և CE հատվածները հավասար են, AEB անկյան մեծությունը 111 աստիճան է: Գտեք ABE անկյան մեծությունը::



Արել Բարայան, 7-րդ դասարան, Միջին դպրոց

41. Քանի՞ լուրիկ է կշռում մեկ գազարը:



Տիգրան Խաչատրյան, Արևելյան Դպրոց, 3-րդ դասարան

42. Վաչեն ունի 2 քույր: Նրա հոր կողմից տատիկն ու պապիկը ունեն 7 թոռ, իսկ մոր կողմից տատիկն ու պապիկը՝ 5 թոռ: Քանի՞ թոռնիկ ունեն երկու կողմի տատիկները և պապիկները միասին:

Լիա Համբարձումյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան

43. Ազարակում կա ընդհանուր թվով 986 խոզ և հավ: Նրանց ոտքերի ընդհանուր թիվը 2522 է: Քանի՞ խոզ կա ազարակում:

Արեգ Մեյթարջյան, 4-րդ դասարան, Հարավային դպրոց

44. Որքանո՞վ կմեծանա հնգանիշ թիվը, եթե նրան ձախից կցագրենք հինգ թվանշանը:

Էդուարդա Խաչիկյան, Արևմտյան դպրոց, 5-րդ դասարան

45. Գտնելով օրինաչափությունը, լրացրեք բաց թողած թիվը:




Ղազարյան Հայկ, Միջին դպրոց, 7-րդ դասարան

46. Երկու եղբայրներ ունեն հավասար թվով ընկույզներ: Եթե ավագ եղբայրը կրտսերին տա 18 ընկույզ, ավագի մոտ կմնա 7 անգամ քիչ ընկույզ, քան՝ կրտսերի մոտ: Քանի՞ ընկույզ կար սկզբում եղբայրներից յուրաքանչյուրի մոտ:

Մարիա Ազնատուրյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան

47. Նկարում պատկերված շրջաններից յուրաքանչյուրի մակերեսը 1 քառ.սմ է: Ամեն երկու վերադրվող շրջանների ընդհանուր մասի մակերեսը $1/8$ քառ.սմ է: Քանի՞ քառակուսի սանտիմետր է հինգ շրջաններով ծածկված պատկերի մակերեսը:



Լիբա Խաչատրյան, Միջին դպրոց, 8-րդ դասարան:

48. Տեղափոխելով լուցկու երկու հատիկ, ստացիր հնարավոր ամենամեծ թիվը: Ո՞րն է այդ թիվը:



Դավիթ Գրիգորյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան

49. Գտեք ABCD քառանկյան $AC=20$ սմ անկյունագծին B և D գագաթներից տարված ուղղահայացները հավասար են 4սմ: Գտեք ABCD քառանկյան մակերեսը:

Մարիա Աբրահամյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան


50. Երկու սովորող տրված մաթեմատիկայի բոլոր խնդիրները կարող են միասին լուծել 12 ժամում: Եթե առաջին սովորողը մենակ աշխատի 2 ժամ, իսկ մյուսը՝ 3 ժամ, ապա կլուծեն բոլոր խնդիրների 20% -ը: Սովորողներից յուրաքանչյուրը քանի՞ ժամում կարող է լուծել այդ նույն քանակի խնդիրները:

Անի Արդուրյան, Ավագ դպրոց, 9-րդ դասարան

51. Նորիկն ու քույրիկն ունեն նույն չափով գումար: Նորիկը որքա՞ն գումար պետք է տա քույրիկին, որ քույրիկի մոտ գումարը լինի 1000 դրամով ավելի:

Նորիկ Գաբրիելյան, Արևելյան դպրոց, 4-րդ դասարան

52. Նայելով նկարին՝ գտիր հարցականը՝



Օլգա Ալեքսանյան, Հյուսիսային դպրոց, 5-րդ դասարան

53. Արշակն ու իր ընկերները ապրում են երեք տարբեր տներում, որոնց համարներն են՝ abc, bc, c, որտեղ a, b, c տարբեր թվանշաններ են: Հայտնի է, որ տների համարների գումարը 912 է: Գտեք b-ն:

Արշակ Մովսիսյան, 5-րդ դասարան, «Օհանյան» կրթահամալիր

54. Նախորդ տարի դասարանի երեսուն սովորողների 3/5 մասը մասնակցեց կրթահամալիրային փառատոնին: Այս տարի մասնակիցների թիվն ավելացավ 1/9-մասով: Այս տարի քանի՞ սովորող մասնակցեց փառատոնին:

Կոշկարյան Ալեն, Միջին դպրոց, 7-րդ դասարան

55. Միհրանը փոքր է Ստեփանից, բայց մեծ է Կարենից: Ստեփանը փոքր է Արտյոմից, իսկ Տիգրանը փոքր է Կարենից: Ո՞վ է նրանցից ամենամեծը:

Մարիա Աբրահամյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան:

56. Մանկապարտեզում ստացել են քարտեր, որոնցով երեխաները կազմում են բառեր: Քարտերի վրա գրված է կա՛մ «մա», կա՛մ «լա» վանկը: Երեխաներից յուրաքանչյուրը վերցրեց երեք քարտ, և դրանցով սկսեցին կազմել բառեր: Ստացվեց, որ «մամա» կարող են կազմել 25 երեխա, «լալա» կարող են կազմել 30 երեխա և «լամա»՝ 36 երեխա: Քանի՞ երեխա վերցրեց երեք նույն վանկով քարտեր:

Տիգրան Մարջանյան, Միջին դպրոց, 7-րդ դասարան

57. Անին դպրոցում սովորում էր 10 առարկա: Այդ առարկաների տարեվերջյան միջին գնահատականը ստացվեց 4,6: Անին քանի՞ երեք, քանի՞ չորս, քանի՞ հինգ է ստացել, եթե հայտնի է, որ այդ գնահատականներից բոլորն էլ ստացել է:

Անի Ղազարյան, «Քվանտ» վարժարան, 7-րդ դասարան


58. 15 մ երկարություն, 10 մ լայնություն և 8 մ բարձրություն ունեցող մարագը 5/6 -ով լցրել են փայտով: Քանի՞ անգամ են բեռնատարները գնացել փայտ բերելու, եթե ամեն անգամ փայտը բերվել է 2 բեռնատարով՝ յուրաքանչյուրում 25 մ³ փայտ:

Վահե Մուսայելյան, Միջին դպրոց, 8-րդ դասարան

59. Երկնքում հազվադեպ հանդիպող թռչունները լինում են կա՛մ կանաչ, կա՛մ կապույտ: Կապույտ թռչունների քանակն աճեց 60%-ով, իսկ կանաչ թռչունների քանակը պակասեց 60%-ով: Արդյունքում կապույտ և կանաչ թռչնակների քանակների հարաբերությունը հավասարվեց սկզբում եղած կանաչ և կապույտ թռչունների քանակների հարաբերությանը: Քանի՞ տոկոսով փոխվեց թռչունների ընդհանուր քանակը:

Անի Արդույան, Ավագ դպրոց, 9-րդ դասարան

60. Մովսեսը գրեց 1, 2, 3, 4, 5 և 6 թվերից յուրաքանչյուրը շրջաններում այնպես, որ եռանկյան յուրաքանչյուր կողմի վրա թվերի գումարը կազմեց 11: Որքա՞ն է եռանկյան կողմերի մեջտեղի շրջաններում գրված թվերի գումարը:



Արել Բաբայան, Միջին դպրոց, 7-րդ դասարան

61. Մեկ մետր կողմի երկարություն ունեցող խորանարդը տրոհեցին 1սմ կողմի երկարությամբ խորանարդիկների ու ստացված խորանարդիկները շարեցին իրար կողք: Ի՞նչ երկարության շարք ստացվեց:

Խաչատրյան Եվա, Արևելյան դպրոց, 4-րդ դասարան

62. Ամենաքիչը քանի՞ լուցկու հատիկ պետք է տեղափոխել, որ ստացվի հինգ հատ եռանկյուն:



Խաչատրյան Տիգրան, Արևելյան դպրոց, 3-րդ դասարան

63. Լուծելով մաթեմատիկական ռեբուսը, որտեղ միևնույն տառով նշված են միևնույն թվանշանները, գտեք երեք թվերի գումարը:

$$\begin{array}{r}
 \mathbf{U} \\
 + \mathbf{F F} \\
 \hline
 \mathbf{9 9 9}
 \end{array}$$

Անդրեասյան Օֆելյա, Միջի դպրոց, 7-րդ դասարան

64. Փողոցի մի կողմում տները հաջորդաբար համարակալված են զույգ թվերով՝ 2,4,6,... իսկ մյուս կողմում՝ կենտ թվերով՝ 1,3,5,...: Չույգ կողմի վերջին տունը ունի 12 համարը, իսկ փողոցում կա ընդամենը 17 տուն: Ի՞նչ համար ունի փողոցի կենտ կողմի վերջին տունը:

Գաբրիելյան Նորիկ, Արևելյան դպրոց, 4-րդ դասարան

65. Սեղանին դրված են հինգ հատ երեք օղականի փոքր շղթաներ, ինչպես ցույց է տրված նկարում: Ալենը ցանկանում է միացնել բոլոր շղթաները և ստանալ երկար շղթա: Նվազագույնը քանի՞ օղակ պետք է բացի և փակի, որպեսզի կարողանա իրար միացնել բոլոր շղթաները:



Կոչկարյան Ալեն, Միջին դպրոց, 7-րդ դասարան: